# Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան

# ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #04

## Ապրիլ 2018

### Երևան, Հայաստան

# Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....3
Սննդի վերամշակում.....3
Տեքստիլ արտադրություն.....5
Շինարարություն.....8
R&D.....11
Տեղեկատվական տեխնոլոգիաներ.....12
Կոսմետիկա.....14
Դեղագործություն.....15
Այլ ոլորտներ.....17
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.20
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....22

# Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

*Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՀԵՑ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.*

## Սննդի վերամշակում

## Գործարար համագործակցության առաջարկներ

**Սննդի ոլորտում գործող իսպանական կոնսորցիումը փնտրում է դիստրիբյուտորներ բարձրորակ իսպանական սննդի լայն տեսականու համար**

Իսպանական արտահանող կոնսորցիումն արտադրում է պարենային ապրանքներ: Այն հիմնադրվել է 2015 թ.-ի հուլիսին, և նրա հիմնական գործունեությունն այդ սննդամթերքի խթանումը, վաճառքն է, ուստի այն փնտրում է դիստրիբյուտորներ ողջ աշխարհում: Ընկերությունն առաջարկում է բարձր որակի ձեռագործ էքսկլյուզիվ արտադրանք: Ապրանքները, որոնք առաջարկում են այդ 10 ընկերությունները, հետևյալն են՝ օրգանական հապալաս, ալկոհոլային խմիչքներ և սպիտակ թունա, կաթնամթերք, պատրաստի սնունդ և սառեցված կրոկետ, Պասիեգասի սաբաոս և կեսադա, մսամթերք և պատրաստի սննդամթերք մսից, ձուկ և խեցեմորթի պաշտետ, կապույտ պանիր՝ PDO Picón Bejes-Tresviso, մաքուր շոկոլադ, սուրճ, օղի, ջին և վերմո:

Ծածկագիր. BOES20180116001

**Բնական քաղցրավենիք, շոկոլադ, թեյ և հյութեր արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ**

Ռումինական ընկերությունը մասնագիտացած է առողջ սննդի ոլորտում և արտադրում է առանց շաքարավազի սննդամթերք՝ քաղցրավենիք, շոկոլադ, թեյ և հյութեր: Ողջ տեսականին պարունակում է ստեվիա (stevia rebaudiana bertoni): Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ ողջ աշխարհում:

Ծածկագիր. BORO20160419001

**Ռուսական ընկերությունը փնտրում է գործընկեր արտադրական, տարածման և համատեղ ձեռնարկության պայմանագրերի ներքո**

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է գյուղատնտեսական հումքի (հացահատիկ և յուղ) մատակարարման ոլորտում, փնտրում է գործընկեր արտերկրում բիզնես համագործակցության համար՝ արտադրական, տարածման և համատեղ ձեռնարկության պայմանագրերի ներքո:

Ծածկագիր. BORU20180124010

**Տնային մակարոնեղեն արտադրող հունգարական ընկերությունը փնտրում է առևտրի միջնորդներ**

Հունգարական ընտանեկան ընկերությունը, որն արտադրում է 20 տեսակ տնային մակարոնեղեն ձվով և առանց ձվի, առանց կոնսերվանտների և ջերմային մշակման, փնտրում է առևտրի միջնորդավորված ծառայություններ (դիստրիբյուտորներ) իր արտադրանքի համար: Ընկերությունը նաև փնտրում է առևտրային գործակալության համաձայնագրեր:

Ծածկագիր. BOHU20161205001

## Գործարար համագործակցության հարցումներ

**Հրուշակեղեն արտադրող մակեդոնական ընկերությունը փնտրում է հումքի մատակարարներ**

Մակեդոնիայում հիմնված ընկերությունը, հրուշակեղենի ոլորտում գործում է շուրջ 16 տարի: Արտադրատեսակները ներառում են տարբեր տիպի քաղցրավենիքներ՝ տարբեր բաղադրիչներով և համերով: Ընկերության տեսականու մեջ առկա է հայտնի սենդվիչ թխվածքաբլիթները, մեղրի բլիթները, թեյը և պրյանիկ կոչվող թխվածքաբլիթները: Իրենց արտադրանքի համար ընկերությունը փնտրում է կաթի փոշի և կակաոյի փոշի արտադրողներ՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BRMK20171115001

**Շվեդական ընկերությունը փնտրում է չրեր և բույսեր արտադրողների՝ թեյանման թուրմեր արտադրելու համար:**

Շվեդական առևտրային ընկերությունն իր հաճախորդներին վաճառում է առողջ սնունդ և փնտրում է չրեր և բույսեր արտադրողների թեյանման թուրմեր արտադրելու համար: Ընկերությունը ցանկանում է համագործակցել արտադրական համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BRSE20180226001

**Շվեդական ընկերությունը փնտրում է այնպիսի արտադրող, ով կարտադրի լոբու վրա հիմնված չիփսեր՝ 3 տիպի համերով**

Առողջ սննդի ոլորտում գործող շվեդական ընկերությունը ցանկանում է արտադրական համագործակցություն հաստատել այն արտադրողի հետ, ով կկարողանա արտադրել լոբու և պսիլլիումի վրա հիմնված չիփսեր 3 տարբեր համերի: Չիփսերը պարունակում են սպիտակուցներ և մանրաթելեր, չեն պարունակում գլյուտեն, լակտոզա և եգիպտացորեն, ինչպես նաև նախատեսված չեն բուսակերների համար: Շվեդական ընկերությունը կտրամադրի բաղադրատոմսը, բայց նաև կցանկանա, որ արտադրողը կարողանա մատակարարել տարբեր բաղադրիչներ:

Ծածկագիր. BRSE20180223001

## Տեքստիլ արտադրություն

## Գործարար համագործակցության առաջարկներ

**Լիտվական ընկերությունը, որը մասնագիտացած է սննդի ծառայության ոլորտի համար բարձրորակ աշխատանքային հագուստի արտադրության մեջ, փնտրում է օտարերկրյա գործընկերներ**

Լիտվական ընկերությունն արտադրում է բարձրորակ սննդի ծառայության ոլորտի համար նախատեսված համազգեստ: Ընկերությունն առաջարկում է իր սեփական դիզայնով կարված բարդ մշակում ստացած գոգնոցներ. այն առաջարկում է ամբողջական փաթեթ՝ դիզայնի առաջարկից մինչև արտադրություն և առաքում՝ ելնելով հաճախորդի կարիքներից:

Ընկերությունը փնտրում է ուղիղ գնորդներ, դիստրիբյուտորներ և գործակալներ Եվրոպայում՝ տարածման և առևտրային գործակալության համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BOLT20180306001

**Ձեռագործ, միջանկյալ օգտագործման համար ինտերիերի դիզայնի առարկաների դիզայները փնտրում է դիստրիբյուտորներ, մանրածախ վաճառքով զբաղվողներ և վաճառքի գործակալներ Եվրոպայում**

Պորտուգալական այս ընկերությունը հանդիսանում է մրցանակակիր դիզայներ և արտադրող՝ ինտերիերի դիզայնի ապրանքների ոլորտում: Այն առաջարկում է տան և ինտերիերի համար նախատեսված լայն տեսականի, ինչպես օրինակ՝ վերմակներ, բարձեր, պարկ աթոռներ (պուֆիկ), գորգեր և լամպեր: Վերամշակելով, այս ընկերությունը կրկնակի օգտագործման է ենթարկում նյութերը, որոնք արդեն չեն ծառայում իրենց նշանակությանը, իսկ դրանց կազմը հետագա կիրառման համար չեն փոխում: Այժմ ընկերությունը ցանկանում է ընդլայնել իր վաճառքը՝ Եվրոպայում ավելացնելով դիստրիբյուտորների ցանցը:

Ծածկագիր. BOPT20180307002

**Լեհական ընկերությունը, որը մատակարարում է կանացի և տղամարդկանց բրենդային կաշվե ապրանքներ և աքսեսուարներ, փնտրում է երկարատև համագործակցություն՝ դիստրիբյուտորների և կոմերցիոն գործակալների հետ**

Կանանց և տղամարդկանց բրենդային կաշվե պայուսակների և աքսեսուարների լեհական մատակարարը փնտրում է երկարատև համագործակցություն՝ առևտրային գործակալության և տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո: Իդեալական գործընկերը պետք է լինի գործակալ կամ դիստրիբյուտոր, որն ունի հաճախորդների ցանց/տարածման ցանց և լավ ծանոթ է տեղական շուկայում կաշվի ոլորտին: Ընկերությունն առաջարկում է համագործակցության ճկուն պայմաններ (օրինակ՝ ուղիղ մատակարարում):

Ծածկագիր. BOPL20170131004

**Լյուքս դասի պայուսակներ արտադրող պորտուգալական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ**

Պորտուգալական ընկերությունը, որն արտադրում է լյուքս դասի պայուսակներ, փնտրում է դիստրիբյուտորներ: Այս կաշվե իրերի ապրանքանիշերի սահմանափակ թողարկումներն ունեն իրենց մոտեցումը՝ հիմնված ընկերության տարածքում առկա արհեստների վրա:

Ծածկագիր. BOPT20161011002

---

**Նորաձևության ոլորտում գործող հայտնի սերբական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ՝ իր ապրանքների համար**

Սերբական ընկերությունը, որը Սերբիայում կանանց հագուստի լավագույն բրենդների շարքում է, փնտրում է դիստրիբյուտորներ եվրոպական երկրներում: Երկու տասնամյակ հաջող աշխատանքից հետո, այն կարողություն է ձեռք բերել իր բիզնեսը նոր շուկաներում ընդլայնելու համար:

Ծածկագիր. BORS20161228001

---

**Շվեդական ընկերությունը, որն արտադրում է օրգանական բարձրորակ բրենդային հագուստ երեխաների համար, փնտրում է վաճառքի նոր գործակալներ և/կամ դիստրիբյուտորներ ողջ աշխարհում:**

Շվեդական ընկերությունը, որը նախագծում և արտադրում է օրգանական բարձրորակ դիզայնով, նյութերով և կարով բրենդային հագուստ երեխաների համար, արդեն ներգրավված է միջազգային համագործակցության մեջ առևտրային գործակալների և դիստրիբյուտորների հետ: Քանի որ ընկերությունն ավելացրել է վաճառքի ծավալները, այն ցանկանում է ընդլայնել իր միջազգային շուկան և փնտրում է նոր վաճառքի գործակալներ և/կամ դիստրիբյուտորներ առկա և նոր շուկաներում:

Ծածկագիր. BOSE20180207001

---

## Գործարար համագործակցության հարցումներ

---

**Լատվիական ընկերությունը փնտրում է կաշվե կոշիկներ արտադրող**

Կանացի կոշիկների ոլորտում գործող լատվիական ընկերությունը փնտրում է փոքր քանակով կաշվե կոշիկներ արտադրող՝ արտադրական համաձայնագրի շրջանակներում համագործակցելու նպատակով: Հնարավոր գործընկերը պետք է կարողանա մատակարարել կոշիկներ՝ տարբեր ոճի կրունկներով, նյութերով և կտորի մանիպուլյացիաներով, որոնք վերջնական արդյունքում աքսեսուարի դեր են տանելու:

---

Ծածկագիր. BRLV20170607001

**Հագուստի մեծածախ վաճառքով զբաղվող ընկերությունը Միացյալ Թագավորությունից փնտրում է դպրոցական ոճի համազգեստի տարրեր**

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որը զբաղվում է դպրոցական համազգեստի և սպորտային հագուստի մեծածախ վաճառքով, փնտրում է աղջիկների և տղաների համար նախատեսված դպրոցական համազգեստի տարրեր արտադրողներ: Ընդ որում, այս տարրերը կկիրառվեն երեխաների և սպորտային խաղեր խաղացողների կողմից: Այն առաջարկում է արտադրական համաձայնագրեր:

Ծածկագիր. BRUK20180315001

# Շինարարություն

## Գործարար համագործակցության առաջարկներ

**Խորվաթական ընկերությունը փնտրում է բետոնե տարրեր արտադրողներ**

Խորվաթական շինարարական ընկերությունը, որն արտադրում է երկաթբետոնե հավաքովի կոնստրուկցիաներ շինարարության համար, առաջարկում է իր ծառայությունները՝ արտադրական համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով: Համագործակցությամբ ակնկալվում է արտադրել ամրացված բետոնե տարրեր:

Ծածկագիր. BOHR20160615001

**Լեհական ընկերությունը, որը կիրառում է անօդաչու թռչող սարքեր էներգետիկայի ոլորտում, փնտրում է գործակալներ, որոնք կցանկանան առաջարկել իր ծառայություններն իրրև ենթակապալառու**

Լեհական ընկերությունը հանդիսանում է առաջատար ընկերություններից, որոնք կիրառում են անօդաչու թռչող սարքեր՝ բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի շինության դժվարամատչելի մասերում: Ընկերության տեխնիկական մասնագիտացումներն են՝ էլեկտրական սյուների շինարարության ընթացքում նախնական պարագաների տեղադրման եղանակը և վերգետնյա բարձր լարման էլեկտրագծերի ստուգումը: Ընկերությունը ցանկանում է հաստատել բիզնես համագործակցություն առևտրային գործակալության համաձայնագրի, ծառայությունների մատուցման համաձայնագրի ներքո և իբրև ենթակապալառու:

Ծածկագիր. BOPL20180216003

**Բելգիական ընկերությունը, որը մասնագիտացած է եզակի դեկորատիվ պատի պանելների, արդյունաբերական բետոնի արտադրության ոլորտում՝ նախատեսված ճարտարապետական ապրանքների մշակման համար, փնտրում է առևտրի միջնորդներ՝ առևտրային կամ տարածման համաձայնագրերի ներքո**

Բելգիական ընկերությունը մասնագիտացած է դիզայներների համար նախատեսված դեկորատիվ և ֆունկցիոնալ պատերի արտադրության ոլորտում, ինչպես նաև՝ ճարտարապետական ապրանքների արտադրության մեջ՝ նախատեսված բետոնե մակերևույթը ֆիզիկական և քիմիական եղանակով փոխելու համար: Այն նաև մասնագիտացած է տարբեր մակերևույթների համար 3D մեծացված ապրանքների արտադրության ոլորտում, ինչպես նաև՝ «Ոսկե բրոնզի» մատակարարման ոլորտում, որը նախատեսված է ոչ մասնագիտական կիրառման համար: Ընկերությունը փնտրում է առևտրի միջնորդներ՝ առևտրային կամ տարածման համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով: Ընկերությունը հետաքրքրված է նաև լիցենզավորման, նուո-հաուով կամ համատեղ ձեռնարկությամբ:

Ծածկագիր. BOBE20160706002

**Վուլկանացված ռետինե և ռետինե մետաղական արտադրատեսակներ արտադրող առաջարկում է ենթապայմանագրային համաձայնագրեր**

Գերմանական ընկերությունը, որը մասնագիտացած է երկաթուղային արդյունաբերության և ավտոմոբիլային ոլորտի հաճախորդների համար վուլկանացված ռետինե և ռետինե մետաղական ապրանքների արտադրության ոլորտում, առաջարկում է իր արտադրական կարողությունները՝ երկարատև համագործակցության նպատակով: Գործընկերներ են որոնվում՝ ենթապայմանագրային համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BODE20160601002

**Ինդուկցիոն ջեռուցման սարքավորում արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ**

Ռուսական ընկերությունը, որը մշակում և արտադրում է բարձրորակ ինդուկցիոն սարքավորում, փնտրում է օտարերկրյա գործընկերներ և դիստրիբյուտորներ արտերկրում՝ տարածման կամ առևտրային համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. BORU20180215001

**Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ**

Չեխական ընկերությունը, որը մասնագիտացած է սառը կնքվող մետաղական բաղադրիչների լայն տեսականու արտադրության ոլորտում (ներառյալ՝ հավաքված մասեր), որոնք նախատեսված են ավտոմոբիլային, էլեկտրական, ինժեներական, շինարարական, կահույքի և սպառողական արդյունաբերության ոլորտների համար, փնտրում է դիստրիբյուտորներ այդ բաղադրիչների համար և ենթապայմանագրային պատվեր այդ ոլորտում:

Ծածկագիր. BOCZ20160802001

## Գործարար համագործակցության հարցումներ

**Մետաղական լարերով ցանցեր արտադրող ռումինական ընկերությունը փնտրում է հումք արտադրողներ՝ արտադրական համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով**

Ռումինական ընկերությունը, որը մասնագիտացած է շինարարության համար նախատեսված մետաղական լարերով ցանցերի արտադրության ոլորտում, փնտրում է բիզնես գործընկերներ, որոնք կարող են մատակարարել պահանջվող բիզնես նյութերը: Համագործակցությունը հիմնված կլինի արտադրական համաձայնագրերի վրա:

Ծածկագիր. BRRO20180227001

**Ռուսական առևտրային և շինարարական ընկերությունը փնտրում է մետաղական պատրաստվածքների մատակարարներ արտերկրում**

Ռուսական առևտրային և շինարարական ընկերությունը, որը 10 տարվա փորձ ունի շինանյութերի վաճառքի ոլորտում, ինչպես օրինակ՝ լաքեր, ներկեր, ապարատներ, պատի պաստառներ և սվաղներ, փնտրում է մետաղական պատրաստվածքների մատակարարներ

արտերկրում՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու համար:

Ծածկագիր. BRRU20171109001

# R&D

**Սպեկտրոսկոպիայի ոլորտում գործող էստոնական ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ H2020-EIC-SMEInst-2018-2020 SME-2 SME instrument 2-րդ փուլի համար**

Էստոնական ընկերությունը, որը ֆուրյե ինֆրակարմիր սպեկտրոսկոպիայի ոլորտում ունի 25 տարվա փորձ, փնտրում է ՓՄՁ գործընկերներ, որոնք գործում են կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշման և բուժման ոլորտում: SME-2 ծրագրում (H2020-EIC-SMEInst-2018-2020) ներգրավված գործընկերը պետք է գործի կլինիկական չափման ծառայությունների ոլորտում և ի վիճակի կլինի իրականացնել կրծքագեղձի քաղցկեղով հիվանդ և առողջ մարդկանց ինֆրակարմիր սպեկտրոսկոպիկ չափումներ «ին վիտրո» օրինակներով:

Ծածկագիր. RDEE20171228001

**H2020 / MSCA /Անհատական անդամակցում. տեխնիկական հմտություններով հետազոտող (MD կամ PHD) կենսաբժշկության/կենսատեխնոլոգիաների ոլորտում մինի շարժական լաբորատորիայի մշակման համար՝ քիմիական նյութերի, բաղադրիչների և այլնի տոքսիկոլոգիական փորձարկում իրականացնելու նպատակով:**

Ճշգրիտ ինժեներիայի ոլորտում գործող փոքր գերմանական ընկերությունը փնտրում է հետազոտող, ով կհովանավորվի HORIZON 2020 – MSCA / "Society and Enterprise Panel"-ի կողմից: Նորարարական ծրագրի նպատակն է մշակել շարժական մինի լաբորատորիա՝ կենսաբանական քիմիական նյութերի, ինչպես նաև կոսմետիկայի և դեղերի բաղադրիչները մարդկային օրինակների վրա տոքսիկոլոգիական փորձարկում կատարելու համար: Դիմորդները պետք է ունենան MD կամ PhD աստիճան կենսաբժշկության/կենսատեխնոլոգիաների ոլորտում և ունենան տեխնիկական

հմտություններ՝ սարքի մշակման և գործիքների ստեղծման համար:

Ծածկագիր. RDDE20180220001

# Տեղեկատվական տեխնոլոգիաներ

## Գործարար համագործակցության առաջարկներ

**Մակեդոնական ընկերությունն առաջարկում է բիզնես և SS կարգավորման ծառայություններ ընկերություններին՝ աութսորսինգային համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:**

Մակեդոնական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է SS խորհրդատվության ոլորտում, առաջարկում է բիզնես և SS կարգավորման ծառայություններ, որոնք հնարավորություն են տալիս ընկերություններին կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաներն առավել արդյունավետ՝ իրենց ռազմավարությանն ու նպատակներին համապատասխանելու համար, այդպիսով ստեղծելով դրական կապ տեղեկատվական տեխնոլոգիաների և կատարված ֆինանսական միջոցների ցուցանիշների, սեփականության ընդհանուր արժեքի, եկամուտների և ներդրումների վերադարձի միջև: Ընկերությունը հետաքրքրված է կնքել աութսորսինգային համաձայնագիր:

Ծածկագիր. BOMK20161229001

**Ֆիննական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ կամ գործակալներ**

Ծրագրեր մշակող ֆիննական ընկերությունը Եվրոպայում փնտրում է դիստրիբյուտորներ և գործակալներ՝ իր ծրագրային ապրանքների համար, որոնք նախատեսված են թատրոնի ներկայացումների ժամանակացույցի և պլանավորման համար: Ցանկալի է, որ գործընկերը գիտելիք և փորձ ունենա թատերական արդյունաբերության և թատերական արտադրանքի

պլանավորման գործընթացի ոլորտում:

Ծածկագիր. BOFI20160915001

**SS ոլորտում գործող սլովենական ընկերությունն առաջարկում է լուծումներ՝ նպատակ ունենալով բարելավել բիզնես մենեջմենթի ծառայությունները**

Սլովենական ընկերությունն աջակցում է հաճախորդի ներքին գործընթացների մշակմանը և առաջարկում է կանխատեսելի վերլուծություն, որոնք թույլ են տալիս ֆինանսական և այլ հաստատությունների համար կանխատեսել բիզնես իրադարձությունները, օրինակները և միտումները: Ընկերությունը փնտրում է գործընկերներ ֆինանսական, SS առողջապահության և այլ արդյունաբերական ոլորտներից՝ ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով: Որոնվող գործընկերները կարող են լինել ֆինանսական ծառայությունների, SS առողջապահական ծառայությունների ոլորտից կամ արդյունաբերական ընկերություններ:

Ծածկագիր. BOSI20180116002

---

**SS ոլորտում գործող լիտվական ընկերությունն առաջարկում է աութսորսինգային ծառայություններ, այն նաև փնտրում է գործընկերներ ծառայությունների մատուցման համաձայնագրի ներքո**

Ընկերությունը, որը տրամադրում է տարբեր ծրագրային, վեբ մշակման, SEO, բջջային ծառայություններ և այլ SS հարակից լուծումներ, արագ աճող ընկերություն է՝ հիմնված Լիտվայում: Ընկերությունն ունի բավականին պրոֆեսիոնալ անձնակազմ և ցանկանում է ընդլայնվել՝ հաստատելով երկարատև համագործակցություն ողջ աշխարհում: Ընկերությունն հետաքրքրված է աութսորսինգային և ծառայությունների մատուցման համաձայնագրերով:

Ծածկագիր. BOLT20180131001

---

## Գործարար համագործակցության հարցումներ

---

**Հոլանդական ընկերությունը փնտրում է SS արտադրողներ՝ առևտրային կամ տարածման ծառայությունների ներքո համագործակցելու նպատակով**

Բիզնեսի զարգացման ոլորտում գործող հոլանդական գործակալությունը փնտրում է SS արտադրողներ՝ նպատակ ունենալով ընդլայնել իր շուկաները: Ընկերությունն առաջարկում է համապատասխան գործընկերների ցանց՝ SS արտադրողների բիզնեսը արագորեն ընդլայնելու նպատակով, զարգացնելով բրենդի ճանաչողականությունը և խթանելով

վաճառքը: Համագործակցությունն այդ ընկերության հետ արագացնում է այդ արտադրանքի մուտքը շուկա: Հոլանդական ընկերությունը կարող է առաջարկել առևտրային կամ տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BRNL20170913001

# Կոսմետիկա

## Գործարար համագործակցության առաջարկներ

**Մաշկի խնամքի բնական միջոցների, բուսական թեյերի և այլ առողջապահական ապրանքների համար որոնվում են գործակալներ և դիստրիբյուտորներ Կիպրոսյան ընկերության կողմից**

Կիպրոսյան բրենդի սեփականատերը, որը գործում է մաշկի խնամքի բնական միջոցների, բուսական թեյերի և այլ առողջապահական ապրանքների մեծածախ առևտրի և ծառայությունների ոլորտում, փնտրում է առևտրի միջնորդավորված ծառայություններ Եվրոպայում և այլուր: Այն փնտրում է պոտենցիալ գործընկերներ՝ առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOCY20170725001

**Օրիգինալ, բոլորը մեկում ֆորմուլայով արևապաշտպան և արևայրուքի կրեմ արտադրողը փնտրում է եվրոպական դիստրիբյուտորներ և գործակալներ**

Առաջադեմ ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որն արտադրում է կոսմետիկա և խնամքի միջոցներ, մշակել է նոր և օրիգինալ արտադրանք, որը մի ֆորմուլայով արևապաշտպան և արևայրուքի կրեմ է: Արտադրատեսակն ապահովում է 5 աստղանի պաշտպանություն՝ արևի վնասակար ուլտրամանուշակագույն A ճառագայթներից (UVA), ինչպես նաև կիրառում է ինքնուրույն արևայրուքի անհոտ տեխնոլոգիա, որը նպաստում է աստիճանական արևայրուքին՝ խոնավեցնող հատկություններով: Ընկերությունը ցանկանում է զարգացնել վաճառքը արտերկրում և փնտրում է կոսմետիկայի ոլորտում փորձ ունեցող

դիստրիբյուտորներ և գործակալներ ողջ Եվրոպայում:

Ծածկագիր. BOUK20161027001

## Գործարար համագործակցության հարցումներ

**Մաշկի խնամքի բնական և օրգանական միջոցներ արտադրող փոքր ընկերությունը Միացյալ Թագավորությունից, փնտրում է բրաբիոն ծաղիկներ և կոսմետիկայի փաթեթավորում**

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որն արտադրում է փոքր քանակի բնական, օրգանական, ձեռագործ, բուսական խնամքի միջոցներ՝ նախատեսված մազերի և խնամքի համար, փնտրում է չորացված բրաբիոնի ծաղիկներ և բարձրորակ օծանելիքի թիթեղյա տարաներ արտադրողներ՝ տարածման ծառայությունների ներքո համագործակցելու համար:

Ծածկագիր. BRUK2017100600101

# Դեղագործություն

## Գործարար համագործակցության առաջարկներ

**Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որն արտադրում է ճնշման կարգավորման սարքավորումներ, փնտրում է դիստրիբյուտորներ**

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որն արտադրում է ճնշման կարգավորման

ապրանքներ, ցանկանում է ընդլայնել իր բիզնեսը միջազգային շուկայում՝ արտերկրի դիստրիբյուտորների միջոցով. այդ ապրանքերի շարքը ներառում է ճնշման նվազեցման ներքնակներ և բարձեր: Այն փնտրում է տարածման ծառայություններ գործընկերների հետ, ովքեր փորձ ունեն առողջապահության և խնամքի շուկաներում:

Ծածկագիր. BOUK20160721007

**Իսրայելյան արտադրական ՓՄՁ-ն փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ արդեն պատրաստի բարձրորակ դեղագործական արտադրանքի համար**

Իսրայելյան ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է բրենդային գեներիկ արտադրանքի ոլորտում, առաջարկում է պատրաստի արտադրանքի բազմազան տեսականի: Արտադրանքը կարող է կիրառվել պարբերական բուժման համար: Առավելությունները շուկայում առկա արտադրանքի նկատմամբ հանդիսանում են ապրանքները հաճախորդների պահանջներին համապատասխանեցնելը և վերջնական արտադրանքի բարձր որակը: Համագործակցությունը հնարավոր է առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո:

Ծածկագիր. BOIL20171116001

---

## Գործարար համագործակցության հարցումներ

---

**Լեհական ընկերությունը փնտրում է մատակարարներ՝ հատուկ բժշկական նյութերի համար և առաջարկում է տարածման ծառայությունների համաձայնագրեր**

Լեհական ընկերությունը, որն արտադրում և մատակարարում է հատուկ բժշկական նյութեր, ցանկանում է ընդլայնել իր պորտֆելը և փնտրում է օտարերկրյա մատակարարներ հետևյալ նյութերի համար. վիրաբուժական սիլիկոնե խոշորացույցներ և գանգը ֆիքսելու համակարգեր: Որոնվող գործընկերները ցանկալի է լինեն OEM (Օրիգինալ սարքավորումներ արտադրողներ) ոլորտից: Ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր:

Ծածկագիր. BRPL20180221001

**Բելգիական ընկերությունը փնտրում է նորարարական առողջապահական արտադրանք կամ սարք՝ դրանք Բենիլյուքսի շուկայում վաճառելու համար**

Փոքր բելգիական ընկերությունը փնտրում է նորարարական, շուկայահանմանը պատրաստ առողջապահական արտադրանք կամ սարքավորում՝ այն Բենիլյուքսում, Հոլանդիայում և Լյուքսեմբուրգում վաճառելու նպատակով: Ընկերությունը փնտրում է կա՛մ առևտրային գործակալության, կա՛մ տարածման ծառայությունների համաձայնագիր:

Ծածկագիր. BRBE20180103001

# Այլ ոլորտներ

## Գործարար համագործակցության առաջարկներ

**Սպառողական ապրանքներ արտադրողը փնտրում է գործակալներ և դիստրիբյուտորներ**

Լեհական ձեռնարկությունը, որը հանդիսանում է բրենդավորված և փաթեթավորված ապրանքների մատակարարմամբ, ցանկանում է հաստատել համագործակցություն օտարերկրյա գործընկերների հետ առևտրային կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո: Լեհական ձեռնարկությունն առաջարկում է տարբեր ապրանքներ, կարգավորվող փաթեթավորում և խմբաքանակի չափ և ճկունություն, ճշտապահություն համագործակցության ընթացքում:

Ծածկագիր. BOPL20170131006

**Հագուստի կախիչներ և կահույքի աքսեսուարներ արտադրող լեհական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ Եվրոպայում**

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է պլաստմասսայի մշակման ոլորտում, առաջարկում է հագուստի կախիչներ և կահույքի աքսեսուարներ: Ընկերությունը ցանկանում է համագործակցել օտարերկրյա ընկերությունների հետ Եվրոպայում տարածման և/կամ արտադրական ծառայությունների համաձայնագրերի ներքո:

Ծածկագիր. BOPL20160819001

**Հեծանիվներ արտադրող իտալական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ**

Իտալական ընկերությունը երկրում հեծանիվ արտադրող առաջատար ընկերություններից է: Արտադրանքը վերաբերում է ամեն տիպի հեծանիվներին՝ դասական և էլեկտրական: Ներկա, հաստատված և լոյալ հաճախորդներ ունենալով հանդերձ, ընկերությունը փնտրում է տարածման ծառայություններ՝ նպատակ ունենալով զարգացնել իր բրենդը, ինչպես նաև իր արտադրանքը Իտալիայից դուրս վաճառելու համար:

Ծածկագիր. BOIT20160922002

**Մամլող գործիքներ արտադրող ռուսական ընկերությունը փնտրում է առևտրի գործակալներ արտերկրում**

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է մամլող, զտիչ և տարբեր տեխնոլոգիաներում կիրառվող գործիքների նախագծման և արտադրության ոլորտում, փնտրում է օտարերկրյա գործընկերներ՝ առևտրային գործակալության համաձայնագրերի հաստատման համար:

Ծածկագիր. BORU20170206001

**Սինթետիկ ռաթթանից էքստերիերի կահույք և աքսեսուարներ արտադրող լեհական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ/գործակալներ**

Սինթետիկ ռաթթանից (հայտնի է նաև տեխնոռաթթան/պոլիռաթթան) կահույք արտադրող լեհական ընկերությունը, որի արտադրանքը ներառում է՝ ցանկապատի շերտեր, պատշգամբներ, այգիների ցանկապատներ, փնտրում է միջազգային գործընկերներ, ովքեր հետաքրքրված են երկարատև համագործակցությամբ: Ընկերությունը ցանկանում է հիմնել տարածման ծառայություններ և/կամ առևտրային գործակալության համաձայնագիր: Հնարավոր է նաև արտադրական համաձայնագիր:

Ծածկագիր. BOPL20180204002

## Գործարար համագործակցության հարցումներ

**Անասնաբուծական (խոշոր եղջերավոր անասուններ, ձիեր) ապրանքների և աքսեսուարների ներմուծողը և դիստրիբյուտորը փնտրում է նոր արտադրատեսակներ՝ դրանք ներկայացնելու և/կամ տարածելու համար**

Փոքր ռումնիական ընկերությունը Տրանսիլվանիայից, որը գործում է անասնապահության ոլորտի ապրանքների և աքսեսուարների վաճառքի ոլորտում, ցանկանում է հանդես գալ իբրև գործակալ և ներկայացուցիչ օտարերկրյա արտադրողների արտադրանքի համար

Ռումինիայի հարավ-արևմուտքի շուկայում կամ որպես դիստրիբյուտոր այդ ապրանքներն իր սեփական խանութում վաճառելու համար:

Ծածկագիր. BRRO20160718001

**Ռումինական ընկերությունը, որն արտադրում է պարարտանյութեր, փնտրում է մոնոֆոսֆատի, կալիումի նիտրատի, քլորիդի (փոշի վիճակում) մատակարարներ՝ արտադրական և/կամ ծառայությունների մատուցման համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:**

Ռումինական ընկերությունը, որը մասնագիտացած է գյուղատնտեսության, խաղողագործության, անտառային տնտեսության, այգեգործության, ծաղկաբուծության համար, նաև ավիացիայի, օդանավակայանների, մայրուղիների կամ այլ կենցաղային օգտագործման համար և հակասառցային լուծումներում էկո պարարտանյութերի արտադրության ոլորտում, փնտրում է հումք՝ կալիումի նիտրատ, քլորիդ (փոշի վիճակում) իր արտադրանքի համար:

Ծածկագիր. BRRO20160316001

**Իսրայելյան ընկերությունը փնտրում է պրեմիում դասի պլաստիկ խեժ՝ ներմուծելու նպատակով**

Փորձառու իսրայելյան ընկերությունը, որը գործում է պլաստիկ հումքանյութի (պլաստիկ հատիկներ) ոլորտում որպես առևտրային գործակալ, փնտրում է համագործակցություն միջազգային արտադրողների հետ՝ բարձրորակ պլաստիկ հումքանյութը իսրայելյան շուկայում վաճառելու նպատակով:

Ծածկագիր. BRIL20160801001

**Ռումինական ընկերությունն առաջարկում է լինել առևտրային ներկայացուցիչ այն օտարերկրյա ընկերությունների համար, որոնք ցանկանում են մուտք գործել ռումինական շուկա՝ առևտրային և/կամ արդյունաբերական արտադրանքով, իրավական ծրագրերով և այլն**

Ռումինական ընկերությունը Տրանսիլվանիայից, որը ներքին շուկայում օտարերկրյա ընկերությունների առևտրային ներկայացուցիչ է, փնտրում է օտարերկրյա ընկերություններ, որոնք ցանկանում են իրենց արտադրանքը արտահանել ռումինական շուկա կամ ցանկանում են մշակել համագործակցություն՝ ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման կամ արտադրության նպատակով: Այսպիսով, ռումինական ընկերությունն առաջարկում է օտարերկրյա ընկերություններին լինել նրանց ներկայացուցիչը ռումինական շուկայում առևտրային և/կամ արդյունաբերական արտադրանքի, իրավական ծրագրերի և այլ ոլորտներում:

Ծածկագիր. BRRO20160916001

# Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



## Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

**Մարդկանց և կենդանիների առողջության համար արդյունաբերական արտադրանքների ոչ տոքսիկ ազդեցության վերլուծություն մարքեթինգից առաջ**

Իտալական լաբորատորիան, որը սերտիֆիկացված է որպես լավ լաբորատոր փորձ (GLP) ունեցող լաբորատորիա, գնահատում է նորարարական ապրանքները ոչ-կլինիկական թունաքիմիկատների փորձերի միջոցով առողջության վրա հնարավոր թունավոր ազդեցությունները մինչ ապրանքների շուկայահանումը: Փորձարկված արտադրանքը ներառում է ՝ դեղեր, դեղագործական և անասնաբուժական արտադրանք, թունաքիմիկատներ, կոսմետիկա, սննդամթերք և կերային հավելումներ ու արդյունաբերական քիմիական նյութեր: Լաբորատորիան փնտրում է արդյունաբերական գործընկերներ դեղագործության, բժշկության, սննդի, կերերի ոլորտում՝ ծառայությունների կամ տեխնիկական համագործակցության համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

Ծածկագիր. TOIT20161024010

**3D թվային մոդելներ՝ շինարարության ծրագրի ամբողջական փուլին համագործակցելու և աջակցելու համար**

Իսպանական տեխնոլոգիական կենտրոնն առաջարկում է 3D թվային մոդել, տեխնոլոգիական գիտելիքներ և սարքավորումներ ճարտարապետական ստուդիաներին, շինարարության ոլորտի ՓՄՁ-ներին և այլ ընկերություններին, որոնք հետաքրքրված են առավել արդյունավետ շինարարության համար նոր համակարգերի մշակմամբ, համագործակցություն ընկերության ժամանակավոր միաձուլման ներքո։Ակնկալվող համագործակցությունը ծառայությունների համաձայնագիրն է (շինարարական ընկերություններ) կամ հետազոտական համագործակցությունը 3D մոդելների ոլորտում և դրանց կիրառումը ճարտարապետական կամ մշակութային ժառանգության ոլորտում։

Ծածկագիր. TOES20180302001

---

## Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

**Նորվեգական ընկերությունը փնտրում է հիդրոտուրբիններ արտադրող ընկերություն**

Նորվեգական տեխնոլոգիական ընկերությունը, որը մշակել է կինետիկ էներգիան վերականգնող տուրբին, փնտրում է արտադրական գործընկեր(ներ)։ Տուրբինները պատվերով են արվում յուրաքանչյուր տեղադրման համար և պահանջում են ճշգրիտ աշխատանք՝ ուշադրություն դարձնելով դետալներին։ Յուրաքանչյուր տուրբինի նախագիծը ավարտին է հասցվում Նորվեգական ընկերության կողմից։Ընկերությունը փնտրում է Եվրոպայում հաստատված արտադրական գործընկեր։ Տարեկան ակնկալվող միավորը մինչ 250-ն է։ Ընկերությունն առաջարկում է արտադրական համաձայնագրեր։

Ծածկագիր. TRNO20180219001

**Գյուղատնտեսական տեխնոլոգիաների ոլորտում ներդրման աջակցություն համատեղ ձեռնարկության միջոցով**

Մակեդոնական ընկերությունը, որը զբաղվում է օրգանական արտադրանքով, փնտրում է գործընկերներ տեխնոլոգիաների ոլորտում ներդրման աջակցության համար՝ բնապահպանական և գյուղատնտեսական ապրանքների արտադրության մասով։ Ներդրումը կօգտագործվի անհրաժեշտ սարքավորումների տրամադրման համար՝ արտադրական պորտֆելի արտադրական գիծն ամբողջական դարձնելու նպատակով։ Ընկերությունը հետաքրքրված է համատեղ ձեռնարկության համաձայնագրերով։

Ծածկագիր. TRES20180131001

# Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2018 թ.-ի մայիս, հունիս ամսիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

**Մայիս**

| | |
|---|---|
| **16/05/2018** | **AgroB2B 2018**<br><br>Հիմնական առավելությունները.• Միջազգային բիզնեսի համար կատարյալ մթնոլորտ<br><br>• Հանդիպումը պլանավորելու համար անհատական աջակցություն<br><br>• Մուտք բալկանյան տարածաշրջան և արդյունաբերություն:<br><br>**http://agrob2b2018.talkb2b.net/** |
| **22/05/2018** | **EUREKA Innovation Days 2018 Matchmaking (Helsinki) Finland**<br><br>Այս միջոցառումը բաց է միայն EUREKA նորարարության օրեր միջոցառման մասնակիցների համար: Գրանցվելու և մանրամասն տեղեկատվության համար այցելեք. **http://eurekainnovationdays.org/:** |

| | |
|---|---|
| 24/05/2018 | International matchmaking event “Business. Golf. Jazz. 2018” Klaipeda (Lithuania)<br><br>**Հիմնական ոլորտներն են.**<br><br>- Տրանսպորտ, լոգիստիկա,<br><br>- ՏՏ,<br><br>- Շինարարություն,<br><br>- Սննդի սարքավորումներ, մշակում,<br><br>- Սարքավորումներ,<br><br>- Տուրիզմ,<br><br>- Մետաղներ,<br><br>- Անտառանյութ,<br><br>- Այլ: |

Հունիս

| | |
|---|---|
| 07/06/2018 | AgroB2B 2018<br><br>Նախաձեռնությունը խթանում է տեխնոլոգիական համաձայնագրերի, հետազոտական նախագծերի և հետազոտողների ու ձեռնարկատերերի միջև անդրազգային համագործակցության ստեղծմանը:<br><br>Innovat&Match 2018-ի հիմնական թեմաները.<br><br>✓ ԳՅՈՒՂՄԹԵՐՔ<br><br>✓ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌՈՒՅՈՒՄ<br><br>✓ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ<br><br>✓ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br><br>✓ ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ<br><br>✓ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ |

| | |
|---|---|
| | ✓ ՄԵԽԱՏՐՈՆԻԿԱ ԵՎ ՄՈՏՈՐԻՍՏԻԿԱ: |

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան:

**Նշում:** ***Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:***

*Հարգելի գործարար,*

*Գրանցվեք հետևյալ հղմամբ՝*
*http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799 և ստացեք անվճար հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:*

*Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:*

Այս տեղեկաթերթի մեջ տեսակետները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ արտահայտեն Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալության, Եվրոպական Հանձնաժողովի կամ այլ Եվրոպական կառույցների տեսակետը: Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալությունը, Եվրոպական Հանձնաժողովը կամ դրանց կողմից գործող որևէ անձ պատասխանատու չէ տեղեկաթերթում պարունակվող բովանդակությունն օգտագործվելու դեպքում: